Նկարը՝ Արման Ապերյանի

Գյուղ Չինարի

Չինարի գյուղը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի հյուսիս-արևելքում: Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 235 կմ, մարզկենտրոնից՝ 102 կմ, Հայաստանի **պետական սահմանից՝ 1,5 կմ**:

Այս վայրը եղել է Այգեձոր գյուղի ձմեռանոց-բնակատեղին, որն աստիճանաբար վերածվել է հիմնական բնակավայրի: Մինչև 1930-ական թվականները երկուգյուղերի հողերն ու այգիները խառն են եղել և գյուղերի միջև սահմանագիծ չի եղել:

Չինարին ինքնուրույն համայնքի կարգավիճակ է ստացել 20-րդ դարի սկզբին:

Գյուղից 2,5 կմ հյուսիս-արևելք գտնվում է Խորանաշատ վանքը(13-րդ դար):

Չինարիի Վ. Սաղոյանի անվան միջն. դպրոց

Աղետի ռիսկերի կառավարման մեր թիմը

9-րդ դասարան
Արեն Ծերունյան
Արեն Ջուլիակյան
Արաքս Պետրոսյան
Հայկ Աղասյան
Անի Ոսկանյան
Արեգ Ոսկանյան

Համակարգող՝
Արմինե Մակարյան

Չինարի գյուղում խաղաղ պայմաններում հակառակորդի ուղիղ կրակի հասանելիության պարագայում բուժկետի բացակայությունը

Փուլ 1

Դպրոցի վտանգների, խոցելիության և կարո-ղությունների ուսումնասիրություն/վերլուծություն

- ***Վտանգներ***

  Երկրաշարժ
  Երաշտ
  Կարկուտ
  Ուղիղ կրակ

- ***Խոցելիություն***

  Հակահրդեհային համակարգի բացակայություն
  Ուղիղ կրակի տակ գտնվելը
  Բուժկետի բացակայություն

- ***Կարողություններ***

  Ապաստարան
  Կրակմարիչ
  Տարհանման պլան
  Տարհանման վարժանքներ
  և այլն

Ապաստարան

Կրակմարիչ

Չինարի գյուղի վտանգների, խոցելիության և կարողությունների սխեմատիկ պատկեր

Կարողություն	Վտանգներ	Խոցելիություն
1. Դպրոց 2. Մշակույթի տուն 3. Մանկապարտեզ	1. Սելավներ 2. Հակառակորդի դիրքեր	1. Դպրոց 2. Մշակույթի տուն 3. Մանկապարտեզ

Ուսումնասիրության արդյունքները և օգտագործված գործիքները

Աղետների ռիսկի կառավարման մեր խումբը, վերլուծելով Չինարիի դպրոցի վտանգները, խոցելիությունը և կարողությունները, եկավ եզրակացության, որ որպես հիմնախնդիր մեր թիմը պետք է բևեռի ուշադրությունը ***Չինարի գյուղում խաղաղ պայմաններում հակառակորդի ուղիղ կրակի հասանելիության պարագայում բուժկետի բացակայությունը***

Օգտագործված գործիքներ

- Վեբ կայք/սոց-ցանցեր
- Ակնադիտարկում
- Քարտեզագրում
- Բերդ համայնքի ՏՄՌԿ վերլուծություն
- Դպրոցի ԱՌԿ պլան
- «Երիտասարդների ներգրավվումը համայնքի դիմակայության գործընթացներում» ուղեցույց
- Հարցազրույցներ

Նախագծում օգտագործված հմտություններ

Համագործակցություն

Հաղորդակցություն



Տեխնոլոգիական գրագիտությունը

Մեդիագրագիտություն

Նախաձեռնողականություն

Ճկունություն

Փուլ 2

Հարցազրույցներ

Հարցազրույց Չինարի գյուղի գյուղապետի հետ

Հարց 1. *Ի՞նչ վտանգներ են բնորոշ Չինարի համայնքին:*

Չինարի համայնքին բնորոշ վտանգներ են ուղիղ կրակի տան գտնվելը, ականապատ տարածքները, կարկուտը, երկրաշարժը, հրդեհները, ցրտահարությունները, սողանցքները:

Հարց 2. *Անվտա՞նգ է արդյոք դեպի դպրոց տանող և հարակից ճանապարհները:*

Չինարիում անվտանգ ճանապարհներ ՉԿԱ՛Ն:

Հարց 3. *Ըստ Ձեզ, աղետի կամ արտակարգ իրավիճակի դեպքում դուք պատրա՞ստ եք դիմակայելու:*

Իհարկե, ունենք քաղաքացիական պաշտպանության պլան: Ցանկացած աղետի դեմքում՝ կլինի պատերազմի վերսկսում, թե երկրաշաժ, պատրաստ ենք դիմակայել թե՛ տարհանման, թե՛ առաջին բուժօգնության ձևով:

Հարց 4. *Ուղիղ կրակի տակ գտնվելը վտանգավոր է թե՛ աշակերտների, թե՛ անձնակազմի համար, ի՞նչ լուծումներ եք տեսնում:*

Դպրոցում մենք հոգացել ենք այդ մասին՝ պատելով սահմանին նայող պատուհանները, թողնելով միայն մի փոքր մաս:

Հարց 5. *Ի՞նչ եք կարծում, բուժկետի բացակայությունը վտանգը մեծացնու՞մ է:*

Վտանգը չի մեծացնում, բայց կարող է աղետալի հետևանքներ ունենալ:

Սահմանին նայող պատուհանները

Հարցազրույց Չինարիի դպրոցի տնօրենի հետ

Հարց 1. *Ի՞նչ վտանգներ են բնորոշ Չինարի համայնքին:*
ՉԻնարի համայնքին սպառնող վտանգներից են հակառակորդի ուղիղ կրակի տակ գտնվելը, երկրաշարժերը, սողանցքները, կարակուտը:

Հարց 2. *Անվտա՞նգ է արդյոք դեպի դպրոց տանող և հարակից ճանապարհները:*
Անվտանգ չէ, քանի որ թշնամին հեշտությամբ կարող է հրետանակոծել:

Հարց 3. *Ըստ Ձեզ, աղետի կամ արտակարգ իրավիճակի դեպքում դուք պատրա՞ստ եք դիմակայելու:*
Այո, մենք ունենք ԱՌԿ պլան, ԱՌԿ խումբ և յուրաքանչյուրը գիտի իր անելիքը:



Հարց 4. *Ուղիղ կրակի տակ գտնվելը վտանգավոր է թե՛ աշակերտների, թե՛ անձնակազմի համար, ի՞նչ լուծումներ եք տեսնում:*

Կրակի տակ գտնվելու լուծումը թշնամուն չեզոքացնելն է: Ունենք ապաստարան, կրակոցների ժամանակ պատսպարվում ենք այնտեղ, ուրիշ լուծում չկա:

Հարց 5. *Ի՞նչ եք կարծում, բուժկետի բացակայությունը վտանգը մեծացնու՞մ է:*

Այո, երբեմն առաջին բուօգնության կարիք է լինում:

Հարց 6. *Կա՞ արդյոք բուժկետի կառուցման սահմանափակում՝ կապված աշակերտների թվաքանակի հետ:*

Ո՛չ, չկա:

Կրակոցների հետևանքները

Ուսուցիչների հետ անցկացված հարցազրույցների ընդհանրացված պատասխանները

Հարց 1. *Ի՞նչ վտանգներ են բնորոշ Չինարի համայնքին:*
Չինարիին բնորոշ վտանգներ են սողանքները, ուղիղ կրակի տակ գտնվելը, կարկուտը, երկրաշարժները, ցրտահարությունը:

Հարց 2. *Անվտա՞նգ է արդյոք դեպի դպրոց տանող և հարակից ճանապարհները:*
Ո՛չ, անվտանգ չէ:

Հարց 3. *Ըստ Ձեզ, աղետի կամ արտակարգ իրավիճակի դեպքում դուք պատրա՞ստ եք դիմակայելու:*
Այո, պատրաստ ենք. դպրոցն ունի ԱՌԿ պլան, երեխաներն ու դպրոցի անձնակազմը տեղեկացված են, թե որ աղետի դեպքում ինչ պետք է անել:

Հարց 4. *Ուղիղ կրակի տակ գտնվելը վտանգավոր է թե՛ աշակերտների, թե՛ անձնակազմի համար, ի՞նչ լուծումներ եք տեսնում:*

Սահմանին նայող պատուհանները պատված են, ունենք ապաստարան, որտեղ պատսպարվում ենք կրակոցների ժամանակ:

Հարց 5. *Ի՞նչ եք կարծում, բուժկետի բացակայությունը վտանգը մեծացնու՞մ է:*

Կրակոցների վտանգը չի մեծացնում, բայց մեծացնում է կրակոցների հետևանքով առաջացած վտանգների ռիսկը:

Փուլ 3

Լուծումների առաջարկ

Ելնելով մեր հիմնախնդրից՝ ԱՌԿ խումբը առաջարկում է դպրոցում ստեղծել բուժկետ: Բուժկետի համար պետք է լինելու հաստիք, բուժպարագաներ և մասնագետ:

Մեր ԱՌԿ խումբն առաջարկում է.

1. Դիմել դպրոցի տնօրենին, մարզպետին, որպեսզի որոշում կայացնեն բուժկետ ստեղծել

2. Դպրոցի տարեկան բյուջեի մեջ նախատեսել գումար կահավորման և առաջին բուժօգնության պարագաների ձեռքբերման համար:

3. Դիմել դոնոր կազմակերպություններին՝ Կարմիր խաչի կոմիտե, UNICEF և այլն՝ օժանդակելու ապահովել բուժկետը առաջին օգնության բուժպարագաներով:

4. Դասընթացներ և վարժանքներ իրականացնել աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ՝ ԱՌԿ խմբի ուժերով, ինչպես նաև հրավիրել մասնագետների ԱԻՆ ծառայությունից :

Դպրոցը պատրաստ է տրամադրել բուժկետի համար նախատեսված ազատ սենյակ:

Բուժկետի համար նախատեսված սենյակը